

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ



ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ԳԵՈՂԵԶԻԱԿԱՆ ՔԱՐՏԵԶԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ «ԳԵՈՂԵԶԻԱ ԵՎ
ՔԱՐՏԵԶԱԳՐՈՒԹՅՈՒՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՏԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՍՏՈՒԳՄԱՆ
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2019

Հաշվեքննության հիմքը	ՀՀ հաշվեքննիչ պալատի 2019 թվականի սեպտեմբերի 12-ի թիվ 19/10 որոշում, 2019 թվականի հոկտեմբերի 30-ի թիվ 23/10 որոշում:
Հաշվեքննության օբյեկտը	ՀՀ կադաստրի կոմիտե:
Հաշվեքննության առական	Գեոդեզիական քարտեզագրական ծառայություններ:
Հաշվեքննության ընթացակարգը	Հարցում, արտաքին հաստատում, վերլուծական ընթացակարգ, վերակատարում, վերահաշվարկ:
Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը	2017թ. հունվարի 1-ից մինչև 2018թ. դեկտեմբերի 31-ը ներառյալ:
Հաշվեքննության կատարման ժամկետը	2019թ. սեպտեմբերի 24-ից մինչև 2019թ. դեկտեմբերի 30-ը ներառյալ:
Հաշվեքննության տեսակներ	Իրականացվել է կատարողականի հաշվեքննություն:
Ստուգման օբյեկտը	«Գեոդեզիա և քարտեզագրություն» պետական ոչ առևտրային կազմակերպություն:
Ստուգման առարկան	«Գեոդեզիա և քարտեզագրություն» ՊՈԱԿ-ի ֆինանսատնտեսական գործունեությունը:
Ստուգման ընթացակարգը	Զննում, դիտարկում, հարցում, արտաքին հաստատում, վերահաշվարկ և վերակատարում
Ստուգումն ընդգրկող ժամանակաշրջանը	2017թ. հունվարի 1-ից մինչև 2018թ. դեկտեմբերի 31-ը ներառյալ:
Ստուգման կատարման ժամկետը	2019թ. նոյեմբերի 4-ից մինչև 2019թ. դեկտեմբերի 28-ը ներառյալ:
Հաշվեքննությունն իրականացնող կառուցվածքային ստորաբաժանումը	Հաշվեքննությունն իրականացվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի տասներորդ վարչություն կողմից, որի աշխատանքները համակարգում է Հաշվեքննիչ պալատի անդամ Աբրամ Բախսագույանը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Սեղմագիր (Կատարողականի հաշվեքննության հաշվետվություն)

1. Ներածություն

1.1 Ընդհանուր տեղեկատվություն

1.2 Հաշվեքննության նպատակը

1.3 Հաշվեքննության խնդիրները

1.4 Հաշվեքննության շրջանակը

1.5 Հաշվեքննության չափանիշները

1.6 Ինչպես է իրականացվել հաշվեքննությունը

1.7 Ճանապարհային քարտեզ

2. «Գեոքարտ» ՊՈԱԿ-ի կազմակերպահրավական ձևը

2.1 «Գեոքարտ» ՊՈԱԿ-ի իրավունքների շրջանակը և գործառույթները

2.2 «Գեոքարտ» ՊՈԱԿ-ի կառուցվածքը և աշխատակիցների շարժը

2.3 Դրամական հոսքերը

3. 2015 թվականի որոշման անդրադարձը «Գեոքարտ» ՊՈԱԿ-ի ֆինանսատնտեսական գործունեության վրա

4. «Գեոքարտ» ՊՈԱԿ-ի կազմակերպահրավական ձևի ազդեցությունը մրցույթների վրա

5. Կադաստրի վերահսկողական գործառույթները «Գեոքարտ» ՊՈԱԿ-ի գործունեության նկատմամբ

6. Ընդհանուր եզրակացություններ և առաջարկություններ

Հավելվածներ

ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

(ՍԵՂՄԱԳԻՐ)

Հաշվի առնելով գեոդեզիայի և քարտեզագրության բնագավառում պետական քաղաքականության իրականացման կարևորությունը, «Գեոդեզիա և քարտեզագրություն» պետական ոչ առևտրային կազմակերպության ստեղծման նպատակն ու գործունեության առարկան, տվյալ ոլորտում կազմակերպության աշխատակիցների մասնագիտական հմտությունները, փորձը, կազմակերպության կողմից մատուցվող ծառայությունների որակը և կազմակերպության կազմակերպահրավական ձևի առանձնահատկությունը և հիմք ընդունելով «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի ա) ենթակետով սահմանված դրույթները, հաշվեքննությունն իրականացրած կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների արդյունքների հիման վրա ներկայացվում է հաշվետվություն՝ նպատակային արդյունավետության (օգտավետության) կատարողականի սկզբունքի շրջանակներում:

ՀՀ Կադաստրի պետական կոմիտեի կողմից բաց մրցույթի ընթացակարգով գեոդեզիական-քարտեզագրական ծառայությունների գնումը կազմակերպելը որդեգրված քաղաքականության նպատակին չի ծառայել և վարվող քաղաքականությունը նպաստել է «Գեոքարտ» ՊՈԱԿ եկամուտների նվազմանը և աշխատակիցների թվաքանակի կրճատմանը:

Մասնավորապես՝

- 2015 թվականի որոշումը բացասաբար է անդրադարձել **«Գեոքարտ» ՊՈԱԿ**-ի ֆինանսատնտեսական գործունեության վրա, քանի որ առկա է ռիսկ, որ մրցույթներում չհաղթելու դեպքում Կանոնադրական գործառույթները իրականացնելու համար չէր ունենա բավական եկամուտներ:
- Մրցութային գործընթացներում **«Գեոքարտ» ՊՈԱԿ**-ի կազմակերպահրավական ձևը նրան մասնավոր ընկերությունների նկատմամբ առավելություն է տալիս:

- **Կադաստրը** պատշաճ ձևով չի իրականացրել «Գեոքարտ» ՊՈԱԿ-ի Կանոնադրությամբ իրեն վերապահված վերահսկողական գործառնությունները:

Աբրամ Բախչագույան՝

ՀՀ հաշվեքննիչ պալատի անդամ
19 դեկտեմբերի 2019 թվական
ՀՀ հաշվեքննիչ պալատ,
Բաղրամյան փող. 19, ք. Երևան, Հայաստան

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1.1 Ընդհանուր տեղեկատվություն

Հայաստանի Հանրապետության Հաշվեքննիչ պալատը գեոդեզիական քարտեզագրական ծառայությունների հաշվեքննության շրջանակներում ստուգում է իրականացրել Հայաստանի Հանրապետության կադաստրի պետական կոմիտեի (այսուհետ՝ **Կադաստր**) «Գեոդեզիա և քարտեզագրություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունում (այսուհետ՝ «**Գեոքարտ**» **ՊՈԱԿ**): 2011 թվականին **Կադաստրի** համակարգի երկու ՊՈԱԿ-ների վերակազմակերպման ձևով միավորման արդյունքում ստեղծվել է «**Գեոքարտ**» **ՊՈԱԿ**-ը:¹ **Կադաստրի** պետական կոմիտեի համակարգի «Ուսումնամեթոդական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերակազմակերպման ձևով 2016 թվականին ևս միավորվել է «**Գեոքարտ**» **ՊՈԱԿ**-ի հետ:² «**Գեոքարտ**» **ՊՈԱԿ**-ի նպատակը Հայաստանի Հանրապետության գեոդեզիայի, քարտեզագրության և հողաշինարարության բնագավառում հարաբերությունների կարգավորումն է:³ «**Գեոքարտ**» **ՊՈԱԿ**-ը իր գործունեության շրջանակներում ծառայություններ է մատուցում **Կադաստրին**, սակայն նրան տրված է նաև ձեռնարկատիրական գործունեություն ծավալելու իրավունք:⁴ Մինչև 2015 թվականի ապրիլի 1-ը **Կադաստրը** ՀՀ օրենսդրությամբ իրավունք է ունեցել⁵ գեոդեզիական-քարտեզագրական ծառայությունների և աշխատանքների ձեռք բերման պայմանագրեր կնքել մեկ անձից (կազմակերպությունից): Արդյունքում, որպես կանոն, նման պայմանագրերը կնքվել են «**Գեոքարտ**» **ՊՈԱԿ**-ի հետ: 2015 թվականի ապրիլից հետո

¹ Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 22-ի «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համակարգի «Հողաշինարարության, անշարժ գույքի գնահատման և համակարգված դիտարկումների կենտրոն» ու «Գեոդեզիայի և քարտեզագրության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունները միաձուլման ձևով վերակազմակերպելու մասին» N 1853-Ն որոշում:

² ՀՀ կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 15-ի N 1380-Ն որոշում ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համակարգի «Ուսումնամեթոդական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերակազմակերպման ձևով միացավ շահույթ ստանալու նպատակ չհետապնդող «Գեոդեզիա և քարտեզագրություն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը:

³ «Գեոդեզիա և քարտեզագրություն» պետական ոչ առևտրային կազմակերպության Կանոնադրություն, հրաման N 10, 20 հունվարի 2017 թվական:

⁴ «Գեոդեզիա և քարտեզագրություն» պետական ոչ առևտրային կազմակերպության Կանոնադրություն, հրաման N 10, 20 հունվարի 2017 թվական, կետ 15:

⁵ Կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշման հավելված 1-ի հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 32-րդ կետի 4-րդ ենթակետի 29-րդ տող:

Կադաստրը գեոդեզիական քարտեզագրական ծառայությունների և աշխատանքների ձեռքբերումը սկսել է իրականացնել բաց մրցույթի ընթացակարգով:⁶

2017 և 2018թթ-ին **Կադաստրի** կողմից հայտարարված պետության կարիքների համար գեոդեզիական-քարտեզագրական աշխատանքների ձեռք բերման պետական գնման բաց մրցույթներում հաղթող է ճանաչվել «**Գեոքարտ**» **ՊՈԱԿ**-ը:

1.2 Հաշվեքննության նպատակը

«**Գեոքարտ**» **ՊՈԱԿ**-ի հաճախակի վերակազմակերպումները, ֆինանսավորման եղանակների և աղբյուրների փոփոխությունները Հաշվեքննիչ պալատի համար հիմք են հանդիսացել «**Գեոքարտ**» **ՊՈԱԿ**-ում հաշվեքննություն սկսելու համար :

1.3 Հաշվեքննության խնդիրները

Հաշվեքննության նպատակը «**Գեոքարտ**» **ՊՈԱԿ**-ի ֆինանսական և տնտեսական գործունեության վրա վերակազմակերպումների, ֆինանսավորման եղանակների և աղբյուրների ազդեցության գնահատումն է:

Սահմանված նպատակի իրագործումն ապահովելու համար մշակվել է հարցաշար, որը պարունակում է հետևյալ առանցքային հարցադրումները.

1. 2015 թվականին ՀՀ կառավարության կողմից ընդունված որոշման անդրադարձը «**Գեոքարտ**» **ՊՈԱԿ**-ի ֆինանսատնտեսական գործունեության վրա:
2. «**Գեոքարտ**» **ՊՈԱԿ**-ի կազմակերպարավական ձևի ազդեցությունը մրցույթի վրա:
3. **Կադաստրի կողմից իրականացվող** վերահսկողության գործընթացները «**Գեոքարտ**» **ՊՈԱԿ**-ի գործունեության նկատմամբ:

1.4 Հաշվեքննության շրջանակը

Հաշվեքննությունը կենտրոնացվել է «**Գեոքարտ**» **ՊՈԱԿ**-ի գործունեության վրա: Հաշվեքննության մեջ անրադարձ է կատարվել **Կադաստրի** դերին որպես ոլորտի գլխավոր պատվիրատու և լիազոր մարմին:

1.5 Հաշվեքննության չափանիշները

⁶ ՀՀ կառավարության 2015թվականի հունվարի 30-ի N 105-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 25-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանված աղյուսակում կատարված փոփոխության հիմնավորմամբ

Հաշվեքննիչ պալատը գնահատել է «Գեոքարտ» ՊՈԱԿ-ի գործառույթները՝ համադրելով դրանք ՀՀ օրենքների և այլ իրավական ակտերի հետ: Հաշվեքննության վերջում նշվել է հաշվեքննության շրջանակներում օգտագործված փաստաթղթերի ցանկը (տես՝ Հավելված 1):

1.6 Ինչպես է իրականացվել հաշվեքննությունը

Հաշվեքննությունն իրականացվել է INTOSAI 100 և 300 ստանդարտներին համապատասխան: Հաշվեքննիչ պալատի եզրակացությունները հիմնված են հաշվեքննության փաստաթղթերի, դիտարկումների, հարցումների, արտաքին ապացույցների, ինչպես նաև շահագրգիռ կողմերի հետ հարցազրույցների ուսումնասիրության միջոցով հավաքագրված ապացույցների վրա:

1.7 Ճանապարհային քարտեզ

Գլուխ 2-ում ներկայացված են տեղեկություններ «Գեոքարտ» ՊՈԱԿ-ի և նրա իրավանախորդների վերաբերյալ: Գլուխներ 3, 4 և 5-ում անդրադարձ է կատարվել հաշվեքննության իրականացման նպատակով մշակված հարցադրումներին: Գլուխ 6-ում ներկայացված են վերջնական եզրակացություններն ու առաջարկությունները: Հավելված 1-ում ներկայացված են «Գեոքարտ» ՊՈԱԿ-ի ոլորտը կարգավորող օրենքները և այլ իրավական ակտերը, Հավելված 2-ում ներկայացված են «Գեոքարտ» ՊՈԱԿ-ի Կանոնադրության 15-րդ կետով սահմանված ձեռնարկատիրական գործունեության տեսակները, Հավելված 3-ում ներկայացված են «Գեոքարտ» ՊՈԱԿ-ի կառավարման և գործունեության նկատմամբ վերահսկողական գործառույթները, իսկ Հավելված 4-ում ներկայացված են հաշվեքննվող օբյեկտի ղեկավարի կողմից ներկայացված պարզաբանումները՝ կատարողական հաշվեքննությամբ արձանագրված փաստերի վերաբերյալ:

2. «ԳԵՈՔԱՐՏ» ՊՈԱԿ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՐԱՎԱԿԱՆ ՁԵՎԸ

2.1 «Գեոքարտ» ՊՈԱԿ-ի իրավունքների շրջանակը և գործառույթները

ՀՀ կառավարության 2009 թվականի N 475-Ն որոշման⁷ համաձայն «Հողաշինարարության, անշարժ գույքի գնահատման և համակարգված դիտարկումների կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը տրամադրվել է տարածք ք.Երևանի Կոմիտասի պողոտայի 35/2 հասցեում⁸: Նույն որոշմամբ վերը նշված հասցեում տարածք է հատկացվել նաև «Գեոդեզիա և քարտեզագրություն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը:⁹

2011 թվականի ՀՀ կառավարության թիվ 1853-Ն և 2016 թվականի թիվ 1380-Ն¹⁰ որոշումների համաձայն՝ «Ուսումնամեթոդական»¹¹ կենտրոն», «Հողաշինարարության, անշարժ գույքի գնահատման և համակարգված դիտարկումների կենտրոն» և «Գեոդեզիա և քարտեզագրություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունները միաձուլվեցին և վերակազմակերպվեց «Գեոքարտ» ՊՈԱԿ-ը:

«Գեոքարտ» ՊՈԱԿ-ի Կանոնադրության համաձայն կազմակերպության գործունեության առարկան և նպատակն է աջակցել Հայաստանի Հանրապետության գեոդեզիայի, քարտեզագրության և հողաշինարարության բնագավառում հողային հարաբերությունների կարգավորմանը, մասնավորապես՝

- հողաշինարարությանը,
- անշարժ գույքի պետական միասնական կադաստրի վարմանը,
- հողերի օգտագործման ու պահպանության կազմակերպումը,

⁷ 2009 թվականի ապրիլի 30-ի ՀՀ կառավարության N 475-Ն որոշմամբ փոփոխություններ եւ լրացումներ կատարվեցին 2003 թվականի հուլիսի 23-ի ՀՀ կառավարության N 987 որոշման մեջ:

⁸ Անժամկետ անհատույց օգտագործման իրավունքով տրամադրվեցին (ամրացվեցին) Երևանի Կոմիտասի 35/2 հասցեում գտնվող վարչարարողական շենքի 6-11-րդ հարկերը:

⁹ Կոմիտասի 35/2 հասցեում գտնվող վարչարարողական շենքի նկուղային և 1-5-րդ, 15-րդ, 16-րդ (տեխնիկական) հարկերը:


¹⁰ Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 22-ի «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համակարգի «Հողաշինարարության, անշարժ գույքի գնահատման և համակարգված դիտարկումների կենտրոն» ու «Գեոդեզիայի և քարտեզագրության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունները միաձուլման ձևով վերակազմակերպելու մասին» N 1853-Ն որոշում:

¹¹ ՀՀ կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 15-ի N 1380-Ն որոշում՝ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համակարգի «Ուսումնամեթոդական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերակազմակերպման ձևով միացավ շահույթ ստանալու նպատակ չհետապնդող «Գեոդեզիա և քարտեզագրություն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը:

- հողաշինարարության տարածքային և ներտնտեսային ծրագրերի (փաստաթղթերի) կազմմանը,
- պետական, ազգային, պլանային ու բարձունքային գեոդեզիական ցանցերի ստեղծմանը և թարմացմանը,
- պետական նշանակության տեղագրական և թեմատիկ քարտեզների ստեղծմանը և թարմացմանը,
- նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերի և ստանդարտների մշակմանը,
- **Կադաստրի** պետական կոմիտեի համակարգի մասնագետների ու աշխատողների ուսուցմանը, վերապատրաստմանը, մասնագիտական որակավորման բարձրացմանը,
- տեղեկատվական և վերլուծական նյութերի պատրաստմանը:

2.2 «Գեոքարտ» ՊՈԱԿ-ի կառուցվածքի և աշխատակիցների շարժի վերաբերյալ

«Գեոքարտ» ՊՈԱԿ -ի կազմակերպական կառուցվածք



2013-2019թվականների ընթացքում «Գեոքարտ» ՊՈԱԿ-ի աշխատակիցների թիվը 101-ից աստիճանաբար նվազել է՝ 2019-ին հասնելով 65-ի (տես՝ Աղյուսակ 1): ՀՀ կառավարության 2015թվականի N 105-Ն որոշումից հետո զգալիորեն կրճատվել է աշխատակիցների տարեկան միջին թիվը (2016թվական):

Աղյուսակ 1. 2013-2019 թվականներին «Գեոքարտ» ՊՈԱԿ-ի աշխատակիցների թիվը

Աղյուսակ 1

Տարի	Աշխատողների թիվը տարվա սկզբում	Տարվա ընթացքում աշխատանքի ընդունված աշխատողների թիվը	Տարվա ընթացքում աշխատանքից ազատված աշխատողների թիվը	Աշխատողների տարեկան միջին թիվը
2013	101	111	121	141
2014	91	106	123	122
2015	74	117	128	117
2016	63	80	83	82
2017	60	67	66	95
2018	61	72	68	76
29.11. 2019	65	101	55	90

2.3 Դրամական հոսքեր


Աղյուսակ 2 «Գեոքարտ» ՊՈԱԿ-ի 2013-2018թվականների. դրամական հոսքերի վերաբերյալ

(հազ.դրամ)

	2013	2014	2015	2016	2017	2018
Մնացորդ տարվա սկզբին	8,580.0	6,255.6	9,793.1	17,931.9	19,810.7	12,759.5
Ընդամենը եկամուտներ	347,906.6	359,021.5	391,505.8	263,629.7	248,605.5	284,859.5
Ընդամենը ծախսեր	350,231.0	355,484.0	383,367.0	261,750.9	255,656.7	241,092.4

Աղյուսակ 1 և 2-ի տվյալների համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ ՀՀ կառավարության 2015թվականի N 105-Ն որոշումից հետո «Գեոքարտ» ՊՈԱԿ-ի եկամուտները և ծախսերը ինչպես նաև աշխատակիցների թվաքանակը հիմնականում ունեցել են նվազման միտում (տես՝ գծապատկեր 1):

Գծապատկեր 1 Եկամուտների և աշխատակիցների միջին թվաքանակի համեմատականը (2015թվականի տվյալները ընդունելով որպես բազիսային ցուցանիշներ)



II. ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԻՆԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ

3. 2015 ԹՎԱԿԱՆԻ ՈՐՈՇՄԱՆ ԱՆԴՐԱԴԱՐՁԸ «ԳԵՈՔԱՐՏ» ՊՈԱԿ-Ի ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎՐԱ

Մինչև 2015 թվականի ապրիլի 1-ը գնման ենթակա աշխատանքներն ու ծառայությունները հնարավոր է եղել ձեռք բերել մեկ անձից, ինչը պայմանավորված է «Գեոքարտ» ՊՈԱԿ-ի ստեղծման նպատակով և Կանոնադրությամբ:¹² ՀՀ կառավարության 2015 թվականի N 105-Ն որոշմամբ¹³ կատարվել են փոփոխություններ համաձայն որի մեկ անձից ուղղակի գնում կատարելու պահանջը ճանաչվել է ուժը կորցրած և նույն ծառայությունների և աշխատանքների ձեռքբերման գործընթացն իրականացվել է բաց մրցույթով: 2015 թվականին ՀՀ կառավարության որոշման մեջ կատարված փոփոխություններից հետո **Կադաստրը** աշխատանքների և ծառայությունների գնումները կազմակերպել է բաց մրցույթով:

2017 թվականի ՀՀ կառավարության թիվ 526-Ն¹⁴ որոշմամբ **Կադաստրին** դարձյալ մեկ անձից գնում կատարելու հնարավորություն է տրվել, սակայն **Կադաստրը** չի օգտվել այդ իրավունքից և աշխատանքներն ու ծառայությունները շարունակել է ձեռք բերել բաց մրցույթի ընթացակարգով: Այսպիսով 2017, 2018 և 2019 թվականներին **Կադաստրը** աշխատանքների և ծառայությունների գնումն իրականացրել է բաց մրցույթով, չնայած որ 2017 թվականից հետո այն այլևս չի պահանջվում:

Ինչպես երևում է Աղյուսակ 2-ից մինչև 2015 թվականին «Գեոքարտ» ՊՈԱԿ-ի ֆինանսական դրությունը եղել է համեմատաբար ավելի կայուն և բավարար: «Գեոքարտ» ՊՈԱԿ-ը բավարար չափով աշխատանքների իրականացման և ծառայությունների մատուցման պատվերներ է ստացել **Կադաստրից** և ուներ ավելի քան 100 աշխատակից: 2015 թվականին ընդունված թիվ 105-Ն որոշման արդյունքում մրցույթներին մասնավոր ընկերություններին մասնակցելու հնարավորություն ընձեռնելու փաստը զգալիորեն

¹² ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշման հավելված 1-ի 32-րդ կետի 4-րդ ենթակետի 29-րդ տող:

¹³ Գնումների կազմակերպման գործընթացի մասին ՀՀ կառավարության 2015 թվականի հունվարի 30-ի թիվ 105-Ն որոշման հավելվածի 25-րդ կետի 5-րդ ենթակետ:

¹⁴ ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման հավելված N 1-ի 23-րդ կետի 4-րդ ենթակետի 38-րդ տող:

անդրադարձել է «**Գեոքարտ**» **ՊՈԱԿ**-ի տնտեսական գործունեության վրա: «**Գեոքարտ**» **ՊՈԱԿ**-ի 2016 թվականի եկամուտները 2015 թվականի համեմատ նվազել են 33%-ով: 2018 թվականին ֆինանսական դրությունը փոքր-ինչ բարելավվել է, բայց դեռ 27% -ով պակաս է, քան 2015թվականին:

2015 թվականի որորշումը իր հետեւանքներն է ունեցել նաև անձնակազմի թվաքանակի վրա: 2013 թվականից հետո աշխատողների թիվն աստիճանաբար նվազել է՝ 2013 թվականի 101-ից մինչև 2019 թվականը հասնելով 65-ի կամ կրճատվել է 35% -ով:

2015 թվականին գնումները մրցույթով իրականացնելու փաստը, չհանգեցրեց «**Գեոքարտ**» **ՊՈԱԿ**-ի մարքեթինգային քաղաքականության փոփոխությանը: Մասնավոր ընկերությունների հետ «**Գեոքարտ**» **ՊՈԱԿ**-ի մասնակցությունը մրցույթներին վտանգ է ներկայացնում և մրցույթները չհաղթելու դեպքում կարող է բացասաբար անդրադառնալ կազմակերպության հետագա գործունեության վրա: Այնուամենայնիվ կարելի էր ակնկալել, որ **Կադաստրի** կողմից մրցույթների միջոցով աշխատանքների և ծառայությունների գնումն իրականացնելու մոտեցումը պետք է խթան հանդիսանար, որ «**Գեոքարտ**» **ՊՈԱԿ**-ի ղեկավարության հետաքրքրություններն առավելապես սևեռվեր մասնավոր կազմակերպություններից գեոդեզիական-քարտեզագրական աշխատանքների պատվերների ստացման վրա: Հաշվեքննիչ պալատն այդպիսի քաղաքականության հիմք հանդիսացող փաստաթղթերի չի հանդիպել:

Գծապատկեր 2-ը ցույց է տալիս, որ 2015 թվականից հետո մասնավոր հատվածում «**Գեոքարտ**» **ՊՈԱԿ**-ի ծավալած գործունեությունից ստացված եկամուտը հաստատուն ցածր մակարդակի վրա է գտնվել: «**Գեոքարտ**» **ՊՈԱԿ**-ի ընդհանուր եկամտի միայն 2%-ն է, որ ստացվել է ձեռնարկատիրական գործունեության արդյունքում: Այն, որ «**Գեոքարտ**» **ՊՈԱԿ**-ի ղեկավարությունն իր քաղաքականությունը չի փոխել, հստակ երևում է տարեկան ծախսերի պլանում մարքեթինգային ծախսերի բացակայության փաստից:


Ընդհանուր առմամբ, Աղյուսակ 3-ից և Գծապատկեր 2-ից երևում է, որ «**Գեոքարտ**» **ՊՈԱԿ**-ը գրեթե ամբողջովին կախված է պետական հատվածից, քանի որ ֆինանսական միջոցների մոտ 98 %-ը գոյացել է վերջինից, իսկ մնացած մասը՝ մասնավոր հատվածից: 2019 թվականին այս հարաբերակցությունը փոխվել է և մասնավոր հատվածից ստացված

եկամուտը կազմել է շուրջ 24.6 %, ինչը կարող էր պայմանավորված լինել ղեկավարության փոփոխությամբ (տես՝ Գծապատկեր 2):

**Աղյուսակ 3 «Գեոքարտ» ՊՈԱԿ-ի դրամական մուտքերը 2013-15.10.2019
թվականներին**

	հազ.դրամ						
	2013	2014	2015	2016	2017	2018	15.10.2019
Ընդամենը եկամուտներ	347906.6	359021.5	391505.8	263629.7	248605.5	284859.5	282531.2
որից							
Պետական հատված (Կադաստրի հետ կնքված պայմանագրեր)	309842.6	338656.6	385819.2	258849.4	244691.5	280149.5	213106.5
Մասնավոր հատված (Ձեռնարկատիրական գործունեությունից)	38064.0	20364.9	5686.6	4780.3	3914.0	4710.0	69424.7

Գծապատկեր 2. «Գեոքարտ» ՊՈԱԿ-ի պետական հատվածից ստացված եկամուտները



2015 թվականին մրցույթների ներդրումը, միանշանակ, իր ազդեցությունն է ունեցել «Գեոքարտ» ՊՈԱԿ-ի գործունեության վրա, քանի որ վերջինս գրեթե լիովին կախված է եղել **Կադաստրի** հետ կնքվելիք պայմանագրերից: Իր ներուժը մասնավոր հատվածին կենտրոնացնելու և աշխատանքներ ու ծառայություններ մատուցելու փոխարեն, «Գեոքարտ» ՊՈԱԿ-ը նվազագույնի հասցրած գնառաջարկներով մասնակցել է մրցույթներին (3 պայմանագիր՝ 2017-2018 թվականներին), հակառակ դեպքում կարող էր զրկվել իր եկամտի հիմնական աղբյուրից: Շատ հնարավոր է, որ հաշվարկները ոչ ճիշտ¹⁵

¹⁵ Հաշվեքննիչ պալատը հնարավորություն չի ունեցել վերլուծելու «Գեոքարտ» ՊՈԱԿ-ի հայտերը՝ խելամիտ արժեքի տեսանկյունից և համեմատելու մասնավոր ընկերությունների կողմից ներկայացված գնառաջարկների հետ, այն պատճառով, որ Կադաստրի հայտարարած ոչ բոլոր մրցույթներին են մասնավոր ընկերությունները մասնակցել և «ԳԵՈՔԱՐՏ» ՊՈԱԿ-ը հանդիսացել է միակ հայտատուն:

ձևով են կազմվել, չներառելով աշխատանքի կատարման փաստացի ժամանակը և ծախսերը:

Հաշվերնիչ պալատը եզրակացնում է, որ 2015 թվականի որոշումը բացասաբար է անդրադարձել «Գեոքարտ» ՊՈԱԿ-ի ֆինանսատնտեսական գործունեության վրա, քանի որ առկա է ռիսկ, որ մրցույթներում չհաղթելու դեպքում կանոնադրական գործառույթներն իրականացնելու համար չէր ունենա բավական եկամուտներ:

4. «ԳԵՈՔԱՐՏ» ՊՈԱԿ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԻՐԱՎԱԿԱՆ ՁԵՎԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՄՐՑՈՒՅԹԻ ՎՐԱ

«Գեոքարտ» ՊՈԱԿ-ի գործունեությունը կարգավորվում է «Գեոդեզիա և քարտեզագրություն» պետական ոչ առևտրային կազմակերպության Կանոնադրությամբ:¹⁶

ՀՀ Կառավարության որոշումների և Կանոնադրության 16-րդ կետի ա ենթակետի և 19-րդ կետի համաձայն՝ «Գեոքարտ» ՊՈԱԿ-ին պետության կողմից անհատույց և անժամկետ տրվել է շենք, շինություններ, շարժական գույք, սարքավորումներ, գործիքներ:

Հատկանշական է նաև այն հանգամանքը, որ ՀՀ պետական քարտեզագրագեոդեզիական ֆոնդի նյութերը և տվյալները պետական սեփականություն են և դրանցից օգտվելու համար սահմանված կարգով գանձվում է վճար¹⁷, այնուամենայնիվ «Գեոքարտ» ՊՈԱԿ-ը Կադաստրի հետ կնքված՝ 2017 թվականի մարտի 22-ի N ՀՀԿԱԱԳԿՊԿ-ԲԸԱՇՁԲ-17/1-1 և 2018 թվականի ապրիլի 5-ի N ՀՀԿԱԱԳԿՊԿ-ԲՄԱՇՁԲ-18/1-1 պայմանագրերի շրջանակներում քարտեզագրագեոդեզիական ֆոնդի նյութերից և տվյալներից օգտվելու համար վճարներ չի կատարել:

¹⁶ «Գեոդեզիա և քարտեզագրություն» պետական ոչ առևտրային կազմակերպության Կանոնադրություն, հրաման N 10, 20 հունվարի 2017 թվական:

¹⁷ «Գեոդեզիայի և քարտեզագրության մասին» ՀՀ օրենք, հոդված 11, 3-րդ մաս:

Կանոնադրության 16-րդ կետի բ ենթակետով սահմանված է, որ կազմակերպության սեփականության ձևավորման աղբյուրներից է նաև պետական բյուջեից սահմանված կարգով հատկացվող սուբսիդիաները և տրանսֆերտները:

Կանոնադրության 31-րդ կետի համաձայն, «**Գեոքարտ**» ՊՈԱԿ-ի ֆինանսավորման աղբյուրներից է նաև ՀՀ պետական բյուջեն, սակայն փաստացի պետական բյուջեից որևէ գումարներ չեն հատկացվել:

Մրցույթի ընթացակարգերում «**Գեոքարտ**» ՊՈԱԿ-ի կազմակերպարավական ձևն այլ մասնավոր ընկերությունների նկատմամբ առավելություն է տալիս: Գործնականում «**Գեոքարտ**» ՊՈԱԿ-ը օգտվել է իր կազմակերպարավական ձևից: Այն **Կադաստրի** կողմից հայտարարված մրցույթներին հաղթել է բոլոր հայտատուներից ամենացածր գին առաջարկելու միջոցով: Մասնավոր ընկերությունները ստիպված են կրել այն ծախսերը, որոնցից «**Գեոքարտ**» ՊՈԱԿ-ն ազատված է: Հաշվի առնելով այն հանգամանը, որ **Կադաստրի** կողմից հայտարարված մրցույթների մի շարք չափաբաժիններով միակ հայտատուն հանդիսացել է «**Գեոքարտ**» ՊՈԱԿ-ը, կարելի է եզրակացնել, որ նշված չափաբաժիններով հայտարարված մրցույթները ընթացակարգային առումով կրում են ձևական բնույթ:

Թե ինչպես էր «**Գեոքարտ**» ՊՈԱԿ-ը **Կադաստրի** կողմից կողմից հայտատարված մրցույթներում հաղթող ճանաչվում, և ինչպես էր **Կադաստրն** իր լիազորությունները կատարում՝ որպես պատվիրատու, երևում է հետևյալ օրինակից.

2018 թվականի դեկտեմբերի 5-ին **Կադաստրի** և «**Գեոքարտ**» **ՊՈԱԿ**-ի միջև կնքվեց պետական գնումների պայմանագիր ՀՀ ԱԳԿԿ-ԲՄԾՁԲ-18/02 պետական կարիքների համար տնտեսական հետազոտության ծառայությունների մատուցման վերաբերյալ: Պայմանագրի առարկան տնտեսական հետազոտության ծառայությունների մատուցումն էր: Պայմանագրի համաձայն, աշխատանքը պետք է ավարտվեր 2018 թվականի դեկտեմբերի 15-ին: Պայմանագրի արժեքը կազմում էր 44,610,000 ՀՀ դրամ: Ֆինանսական միջոցների փոխանցումը պետք է տեղի ունենար ըստ վճարումների ժամանակացույցի՝ դեկտեմբեր ամսվա ընթացքում: Ծառայության ժամկետը կարող էր երկարաձգվել մեկ անգամ՝ մինչև 30 օրացուցային օրով, սակայն չպետք է գերազանցեր պայմանագրով սահմանված ժամկետը (**այսինքն, ոչ ավելի, քան 10 օր**):

2018 թվականի դեկտեմբերի 10-ին կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, ծառայության մատուցման ժամկետը երկարաձգվել է 30 օրացուցային օրով, իսկ վճարումը նախատեսվել է կատարել 100% կանխավճարի ձևով:

Համաձայն պայմանագրի կատարման արդյունքների վերաբերյալ հանձման-ընդունման ակտերի, աշխատանքներն ավարտվել են 2019 թվականի մարտի 19-ին: Պայմանագիրը ստորագրելուց երեք աշխատանքային օր անց պայմանագրի վերջնաժամկետն երկարաձգվեց 2019 թվականի հունվարի 15-ը, իսկ աշխատանքները փաստացի ավարտվեցին մարտի 19-ին, այսինքն՝ 63 օր ուշացումով: Պայմանագրային պահանջները չկատարելու համար **Կադաստրի** կողմից որևէ տույժ-տուգանք կամ այլ միջոցներ չեն կիրառվել:

Այս օրինակից պարզ է դառնում, որ «**Գեոքարտ**» **ՊՈԱԿ**-ն, ակնհայտորեն, կարող է շատ կարճ ժամկետով աշխատանքներ կատարելու պատվեր ընդունել, որից հետո համաձայնագրով ժամկետն երկարաձգել և դրա հետ մեկտեղ աշխատանքները հանձնել սահմանված ժամկետից ավելի ուշ՝ առանց տույժերի:

«**Գեոքարտ**» **ՊՈԱԿ**-ը թերևս անհուսալի դրության մեջ չհայտնվելու մտավախություն ունենալով պատրաստ էր **Կադաստրի** հայտարարած ցանկացած մրցույթի հայտ ներկայացնել, որպեսզի կարողանար պահպանել իր անձնակազմը և շարունակել գործունեությունը: **Կադաստրի** կողմից վերը նշված պայմանագրի վարման ձևը Հաշվեքննիչ պալատին հիմք է տալիս ենթադրել, որ **Կադաստրը** և «**Գեոքարտ**» **ՊՈԱԿ**-ը նախապես համաձայնացրել են իրենց գործողությունները, որի արդյունքում պայմանագիրը շնորհվել է «**Գեոքարտ**» **ՊՈԱԿ**-ին, թերևս արդեն իսկ իմանալով, որ մրցույթի պահանջներն անիրատեսական էին:

Սույն հաշվետվության գլուխ 3-ում Հաշվեքննիչ պալատը եզրահանգել է, որ 2015 թվականին մրցույթ հայտարարելու մասին որոշումը բացասաբար է անդրադարձել «**Գեոքարտ**» **ՊՈԱԿ**-ի ֆինանսատնտեսական գործունեության վրա: Եթե «**Գեոքարտ**» **ՊՈԱԿ**-ն ունենար նույն կարգավիճակն, ինչպես մրցույթի մասնակցած մասնավոր


ընկերություններն, ապա «Գեոքարտ» ՊՈԱԿ-ը գեոդեզիայի և քարտեզագրման աշխատանքների շուկայում շատ ավելի անմրցունակ դիրք կզբաղեցնեն: Պետական կազմակերպություն հանդիսանալու փաստն ամենայն հավանականությամբ առավելություն է տվել «Գեոքարտ» ՊՈԱԿ-ին՝ պետական հատվածի մրցույթների գործընթացներում: **Կադաստրի** վերահսկողական գործառույթների և մասնակցության դերը մրցակցային գործընթացներում քննարկվել են սույն հաշվետվության գլուխ 5-ում:

Չնայած Կանոնադրությամբ «Գեոքարտ» ՊՈԱԿ-ը կարող է իրականացնել ձեռնարկատիրական գործունեության մի շարք տեսակներ և զգալի եկամուտներ ապահովել, աշխատողներ ներգրավել, սակայն դրանք իրականացվում են մասնակի:

Կանոնադրության 15-րդ կետով սահմանված է «Գեոքարտ» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակները ներկայացված է 13 ենթակետերով (տես՝ Հավելված 2):


2017-2018 թվականներին «Գեոքարտ» ՊՈԱԿ-ի ձեռնարկատիրական գործունեության տեսակներից մի մասը կատարվել է մասնակի, իսկ մնացածը՝ չի կատարվել, սակայն 2019 թվականին պատկերը նկատելիորեն փոխվել է (տես՝ Գծապատկեր 3):

Գծապատկեր 3 «Գեոքարտ» ՊՈԱԿ-ի ձեռնարկատիրական գործունեության տեսակների կատարումը տոկոսային արտահայտությամբ



2019 թվականին ձեռնարկատիրական գործունեության տեսակների իրականացման ավելացումն անմիջական դրական ազդեցություն է ունեցել «Գեոքարտ» ՊՈԱԿ-ի եկամուտների վրա, ինչը նաև ենթադրում է, որ արդյունավետ կառավարման դեպքում հնարավոր կլինի լրացուցիչ եկամուտներ ներգրավել, ինչպես նաև բարելավել «Գեոքարտ» ՊՈԱԿ-ի կատարողական ցուցանիշները (տես՝ Աղյուսակ 3):

Գծապատկեր 4 «Գեոքարտ» ՊՈԱԿ-ի պետական և մասնավոր հատվածում իրականացվող գործունեության ծավալների փոփոխության ազդեցությունն աշխատակիցների թվաքանակի վրա



Ձեռնարկատիրական գործունեության ծավալների փոփոխությունը կարևոր նշանակություն կարող է ունենալ աշխատակիցների թվաքանակի վրա, ինչն առավել ակնհայտ է դառնում, վերը նշված ցուցանիշների հավելվածի տեմպերը համեմատական վերլուծության ենթարկելու պարագայում (տես՝ Գծապատկեր 4): Այսպես՝ չնայած 2014 թվականին **Կադաստրի** հետ կնքված պայմանագրերի արժեքը նախորդ տարվա նկատմամբ աճել է մոտ 9.3%-ով, սակայն աշխատակիցների թվաքանակը (այդ թվում նաև

տարվա ընթացքում ընդունվածներ) նվազել է 7.1%-ով, ինչը կարող է մեծապես կապված լինել այն հանգամանքի հետ, որ նույն ժամանակահատվածում ձեռնարկատիրական գործունեության շրջանակներում մասնավոր հատվածի հետ կնքված պայմանագրերի արժեքը նախորդ տարվա նկատմամբ նվազել է 46.5%-ով: Նույն պատկերն առկա է նաև 2015 թվականին՝ **Կադաստրի** հետ կնքված պայմանագրերի արժեքը նախորդ տարվա նկատմամբ աճել է 13.9%-ով, այն դեպքում, երբ աշխատակիցների քանակը (այդ թվում նաև տարվա ընթացքում ընդունվածներ) կրկին նվազել է՝ 3%-ով, ինչը մեծապես կարող է կապված լինել մասնավոր հատվածի հետ կնքված պայմանագրերի արժեքի 72.1% նվազման հետ: Հատկանշական է, որ 2014 թվականին ձեռնարկատիրական գործունեության ծավալները չեն գերազանցել ընդհանուրի 5.7%-ը, իսկ 2015 թվականին՝ 1.5 %-ը (տես՝ Աղյուսակ 3 և Գծապատկեր 2-ը):

2016 թվականին և՛ մասնավոր, և՛ պետական հատվածի հետ կնքված պայմանագրերի արժեքը նախորդ տարվա նկատմամբ նվազել է (համապատասխանաբար 15.9% և 32.9 %), ինչը բերել է աշխատակիցների թվաքանակի (այդ թվում նաև տարվա ընթացքում ընդունվածներ) նվազմանը՝ 25.1%:

2017 թվականին մասնավոր և պետական հատվածի հետ կնքված պայմանագրերի արժեքը նախորդ տարվա նկատմամբ նույնպես նվազել է (համապատասխանաբար 18.1% և 4.8%), ինչը բնականաբար պետք է բերեր աշխատակիցների քանակի (այդ թվում նաև տարվա ընթացքում ընդունվածներ) նվազմանը՝ 11.2%:

2018 թվականին մասնավոր և պետական հատվածի հետ կնքված պայմանագրերի արժեքը նախորդ տարվա նկատմամբ աճել է (համապատասխանաբար 20.3% և 14.5%), ինչը բնականաբար պետք է բերեր աշխատակիցների քանակի (այդ թվում նաև տարվա ընթացքում ընդունվածներ) ավելացմանը՝ 4.7%:

2019 թվականին կրկին տեսնում ենք նույն պատկերը ինչպես 2014 և 2015 թվականներին: Այսպես՝ չնայած 2019 թվականին **Կադաստրի** հետ կնքված պայմանագրերի արժեքը նախորդ տարվա ցուցանիշի նկատմամբ նվազել է մոտ 6.9%, աշխատակիցների թվաքանակը (այդ թվում նաև տարվա ընթացքում ընդունվածներ) ավելացել է 24.8%, ինչը, կարող է մեծապես կապված լինել կրկին այն հանգամանքի հետ, որ նույն տարում

մասնավոր հատվածի հետ կնքված պայմանագրերի արժեքը նախորդ տարվա նկատմամբ ավելացել է մոտ 14 անգամ կամ 1374%-ով:

Հաշվեքննիչ պալատը եզրակացնում է, որ մրցութային գործընթացներում «Գեոքարտ» ՊՈԱԿ-ի կազմակերպաիրավական ձևը նրան այլ մասնավոր ընկերությունների նկատմամբ առավելություն է տալիս:

5. ԿԱԴԱՍՏՐԻ ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ «ԳԵՈՔԱՐՏ» ՊՈԱԿ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ

«Գեոքարտ» ՊՈԱԿ-ի Կանոնադրության 25-րդ կետի գ) ենթակետով սահմանված է, որ **Կադաստրն** իրականացնում է կազմակերպության գործունեության նկատմամբ վերահսկողություն (տես՝ Հավելված 3): Ի թիվս այլ գործառույթների **Կադաստրը** պետք է իրականացնի նաև հետևյալ գործողությունները.

- Հաստատի կազմակերպության տարեկան հաշվետվությունները և հաշվեկշիռը:
- Համաձայնություն տա գործադիր տնօրենի կողմից հաստատված կազմակերպության ձեռնարկատիրական գործունեության ընթացքում ստացված շահույթի օտագործման ուղղություններին:
- Հաստատի կազմակերպության գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերը:
- Հաստատի կազմակերպության տարեկան ծախսերի նախահաշիվը:
- Համաձայնություն է տա գործադիր տնօրենի կողմից հաստատված կազմակերպության կառուցվածքին ու կառուցվածքային ստորաբաժանումների իրավասություններին:
- Քննարկի և հաստատի գործադիր տնօրենի հաշվետվությունները:

Կանոնադրության 29-րդ և 30-րդ կետերը հստակորեն վերաբերում են **Կադաստրի** կողմից իրականացվող վերահսկողության գործողություններին, իսկ 28-րդ կետը

կարգավորում է «Գեոքարտ» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրենի իրավասությունները և նրա պարտականությունները **Կադաստրի** նկատմամբ (տես՝ Հավելված 3):

Հաշվեքննության շրջանակը չի ներառել այն գնահատումը, թե ինչպես է **Կադաստրը** կատարել իր վերահսկողական գործառույթները¹⁸, սակայն «Գեոքարտ» ՊՈԱԿ-ում ստացված տեղեկատվությունը հիմք է տալիս ենթադրել, որ **Կադաստրը** լիարժեք և բավարար չափով չի կատարել իր վերահսկողական գործառույթները:

Մասնավորապես՝

1. Հաշվեքննության ընթացքում պարզվել է, որ տարբեր տարիներին **Կադաստրը** «Գեոքարտ» ՊՈԱԿ-ին պատվիրել է՝ ատլասների, քարտեզների, բառարանների, բուկլետների պատրաստման աշխատանքներ, որոնց մի մասը տպագրվելուց հետո տնօրինման կամ ի պահի իրավունքով հանձնվել է «Գեոքարտ» ՊՈԱԿ-ին: Չնայած այն փաստին, որ ատլասների, քարտեզների, բառարանների, բուկլետների պատրաստման և տպագրման համար ծախսվել են բավականաչափ ֆինանսական միջոցներ «Գեոքարտ» ՊՈԱԿ-ը դրանք պահում է խոնավ և ոչ բարվոք պահոցներում: Պահպանման ոչ պատշաճ պայմանների հետևանքով դրանց մի մասը դարձել են ոչ պիտանի և 2018 թվականի մարտի 3-ին դուրս են գրվել: (տես՝ Աղյուսակ 4, 5):

Հաշվեքննիչ պալատը չի գտել ապացույցներ այն մասին, որ **Կադաստրը** վերահսկում է ատլասների, քարտեզների, բառարանների, բուկլետների պատշաճ պահպանումը, չնայած Կանոնադրության 25-րդ կետի գ) ենթակետը և 29-րդ կետը ակնկալում են, որ լիազոր մարմինը պետք է վերահսկի «Գեոքարտ» ՊՈԱԿ-ի գործունեությունը:

Աղյուսակ 4

Հ/Հ	Անվանում	Տպագրման տարեթիվը	Տպագրված քանակը	Մնացորդը 14/11/2019	Կորած
1	ՀՀ ազգային ատլասի Ա հատոր (անգլերեն)	2017	500	168	14
2	ՀՀ ազգային ատլասի Բ հատոր (անգլերեն)	2017	500	168	13
3	Տեղեկատու բառարան	2017	600	600	
4	Տուրիստական բուկլետ (հայերեն, անգլերեն)	2017	1000	1000	
5	100-րդ տարեկիցին նվիրված քարտեզներ	2015	-	1142	

¹⁸ Հաշվեքննիչ պալատը Կադաստրի պետական կոմիտեում համապատասխանության հաշվեքննություն իրականացնելիս հատուկ ուշադրություն կդարձնի Կադաստրի վերահսկողության դերին:

Աղյուսակ 5

Հ/Հ	Անվանում	Տպագրման ամսաթիվ	Տպագրված քանակը	Մնացորդը 01/10/2017	Խոնավությունից վնասված	Մնացորդը 14/11/2019
1	ՀՀ ազգային ատլասի Ա հատոր (հայերեն)	2007	2500	239	196	27
2	ՀՀ ազգային ատլասի Բ հատոր (հայերեն)	2007	2500	763	272	470
3	Մանկական պատկերազարդ ատլաս	-	-	-	-	358
4	Տարբեր նշանակության քարտեզներ	-	-	2388	1473	828
5	Բուկլետներ, գրքույքներ ...	-	-	136	-	126

2. 2018 թվականին կնքված N ՀՀ ԱԳԿԿ-ԲՄԾՁԲ-18/02 պայմանագրի և կից կնքված համաձայնագրի վերլուծության արդյունքում պարզվել է, որ չի պահպանվել ՀՀ կառավարության 2017 թվականի N 526-Ն որոշման¹⁹ և պայմանագրի 7.8 կետի²⁰ պահանջը: Աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացույցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետը՝ **10 օրացույցային օր: Այսպիսով պայմանագրի ժամկետը կարող էր երկարաձգվել առավելագույնը մինչև 2018 թվականի դեկտեմբերի 25-ը:**

Պայմանագրի արդյունքների հանձման-ընդունման արձանագրությունների պատկերն հետևյալն է.

Հանձման-ընդունման արձանագրություններ	Ամսաթիվ	Վճարման ենթակա գումարը
Արձանագրություն N 1	13.12.2018թ	22.305.000 AMD
Արձանագրություն N 2	10.01.2019	15.613.500 AMD

¹⁹ ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման¹⁹ 7-րդ գլխի 56-րդ կետի 4 մասի

²⁰ 2018 թվականին կնքված N ՀՀ ԱԳԿԿ-ԲՄԾՁԲ-18/02 պայմանագրի կետ 7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում այուն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացույցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

Արձանագրություն N 3	19.02.2019	4.461.000 AMD
Արձանագրություն N 4	19.03.2019	2.230.500 AMD

Համաձայն պայմանագրով նախատեսված 5.3 կետի՝ ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0.05% չափով: Նախատեսված տուգանքը և տույժը պետք է հաշվարկվեն և հաշվանցվեն ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ: Այսպիսով համաձայն N 526-Ն որոշման պայմանագրի վերջին օրը պետք է լիներ 2018 թվականի դեկտեմբերի 25-ը, որից հետո պետք է հաշվարկվեր և գանձվեր տույժ, ինչը չի կատարվել: Նախատեսված տույժերի հաշվարկ

Ժամանակահատվածը	Մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գին	Ուշացրած օրերի քանակը	Յուրաքանչյուր օրվա համար հաշվարկվող տոկոսի չափը	Հաշվարկվող տույժի չափը
26.12.2018-10.01.2019թ.	22,305,000.0	15	0.05%	167,287.5
10.01-19.02.2019թ.	6,691,500.0	40	0.05%	133,830.0
19.02-19.03.2019թ.	2,230,500.0	28	0.05%	31,227.0
Ընդամենը				332,344.5

Այսպիսով մրցույթով նախատեսված աշխատանքները փաստացի կատարվել են 104 օրացույցային օրում, այլ ոչ թե 10 օրում: Այնուամենայնիվ **Կադաստրն** առանց որևէ սահմանափակման ընդունել է «**Գեոքարտ**» **ՊՈԱԿ**-ի աշխատանքները և ժամկետանց օրերի համար նախատեսված 332.3 հազ.դրամ տույժը չի հաշվարկվել և չի փոխհատուցվել:

3. 2017-2018 թվականների ընթացքում անշարժ գույքի նկատմամբ իրավունքների ծագման, փոփոխման և փոխանցման պետական գրանցման նպատակներով ստացված դիմումներից թվով 54.894 կասեցման և թվով 4.699 մերժման պատճառների վերաբերյալ **Կադաստրը** չունի վերլուծական համակարգ: Այդ իսկ պատճառով նա չի կարող վերահսկել այն մերժումների և կասեցումների քանակը, որը բխում է 2017-2018 թվականների ընթացքում «Գեոքարտ» ՊՈԱԿ-ի հետ կնքած պայմանագրերի շրջանակներում կատարված աշխատանքների արդյունքներից, հետևաբար չի կարող կարգավորել և վերահսկել նաև «Գեոքարտ» ՊՈԱԿ-ի արտադրանքի որակը:

4. «Գեոքարտ» ՊՈԱԿ-ը հիմնադրի կողմից սահմանված կարգով չի հրապարակել 2013-2018 թվականների տարեկան ֆինանսական հաշվետվությունները, որը պարտավոր էր կատարել Կանոնադրության 30-րդ կետի համաձայն :

Հաշվեքննիչ պալատը եզրակացնում է, որ Կադաստրը պատշաճ ձևով չի իրականացնում «Գեոքարտ» ՊՈԱԿ-ի Կանոնադրությամբ իրեն վերապահված վերահսկողական գործառույթները:

6.ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Եզրակացություն

ՀՀ Կադաստրի պետական կոմիտեի կողմից բաց մրցույթի ընթացակարգով գեոդեզիական-քարտեզագրական ծառայությունների գնումը կազմակերպելը որդեգրված քաղաքականության նպատակին չի ծառայել և վարվող քաղաքականությունը նպաստել է «Գեոքարտ» ՊՈԱԿ եկամուտների նվազմանը և աշխատակիցների թվաքանակի կրճատմանը:

Առաջարկություններ

Կադաստրի պետական կոմիտեին

1. Հաշվի առնելով գեոդեզիայի և քարտեզագրության բնագավառում պետական քաղաքականության իրականացման կարևորությունը, ինչպես նաև «Գեոքարտ» ՊՈԱԿ-ի ստեղծման նպատակն ու առարկան և որոշ չափաբաժիններով հայտարարված մրցույթներում միակ հայտատու հանդիսանալու փաստը և այն, որ 2017 թվականի ՀՀ կառավարության թիվ 526-Ն որոշմամբ Կադաստրին դարձյալ մեկ անձից գնում կատարելու հնարավորություն է տրվել, ուստի՝ գեոդեզիական-քարտեզագրական աշխատանքների և ծառայությունների ձեռք բերումը իրականացնել «Գեոքարտ» ՊՈԱԿ-ից սուբսիդիայի տրամադրելու միջոցով:

2. Ամբողջությամբ իրականացնել «Գեոքարտ» ՊՈԱԿ-ի Կանոնադրությամբ Կադաստրին վերապահված վերահսկողական գործառույթներն մասնավորապես՝ ուշադրություն դարձնել ի պահ հանձնված գույքի պահմանման պայմաններին և կնքված պայմանագրերի կատարման ժամկետներին:

3. «Գեոքարտ» ՊՈԱԿ-ի ձեռնարկատիրական գործունեությունը խթանելու նպատակով վերլուծել և հատվածավորել շուկան ու ընտրել նպատակային հատվածը:

4. Ձեռնարկատիրական գործունեության տեսակներով պայմանավորված աշխատանքների շուկայի ուսումնասիրության և այդ շուկայում առաջխաղացման հետ

կապված տարեկան ծախսերը պլանավորելիս ընթացիկ ծախսերում նախատեսել ֆինանսական միջոցներ մարքեթինգային ծախսերի համար:

ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հաշվեքննության ընթացքում կազմվել և ծանոթացման և ստորագրման նպատակով հաշվեքննվող և ստուգվող օբյեկտին են ներկայացվել մեկական արձանագրություն, որին ի պատասխան ներկայացվել են բացատրություններ:

Մեր կողմից ուսումնասիրվել են ներկայացրած բացատրությունները, որոնց մի մասն ընդունվել է մեր կողմից և ստուգման արդյունքներում կազմված արձանագրության հիման վրա կազմված եզրակացությունում հաշվի են առնվել:

«Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն, հաշվեքննության օբյեկտի ղեկավարը, ընթացիկ եզրակացությունը ստանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, Հաշվեքննիչ պալատին տրամադրում է ընթացիկ եզրակացությունում ամրագրված անհամապատասխանության, խեղաթյուրման վերացման, առաջարկությունների իրականացման և ընթացիկ եզրակացությանը վերաբերող այլ գրավոր տեղեկատվություն:

Հավելված 1 Օգտագործած իրավական ակտերի և օրենքների ցանկ

1. Աշխարհագրական անվանումների մասին ՀՀ օրենք
2. Գեոդեզիայի և քարտեզագրության մասին ՀՀ օրենք

3. Գնումների մասին ՀՀ օրենք
4. Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին ՀՀ օրենք
5. ՀՀ կառավարության 2003 թվականի հուլիսի 23-ի N 987-Ն որոշում
6. ՀՀ կառավարության 2009 թվականի ապրիլի 30-ի N 475-Ն որոշում
7. ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 22-ի N 1853-Ն որոշում
8. ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշում
9. ՀՀ կառավարության 2015 թվականի հունվարի 30-ի N 105-Ն որոշում
10. ՀՀ կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 15-ի N 1380-Ն որոշում
11. ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշում
12. Գեոդեզիայի և քարտեզագրություն «Գեոքարտ» ՊՈԱԿ-ի Կանոնադրություն, հրաման 10 20.01.2017 թվական

Հավելված 2 «Գեոքարտ» ՊՈԱԿ-ն իրականացնում է ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները

1. Տեխնիկական նախագծերի պահանջներին համապատասխան գեոդեզիական խտացման և հանութային ցանցերի ստեղծում, ինժինեռա-գեոդեզիական ու հանութային աշխատանքների իրականացում,
2. Կադաստրային քարտեզագրման աշխատանքների իրականացում,
3. Գերատեսչական և տեղական /համայնքային/ նշանակության երկրատեղեկատվական համակարգի ստեղծում,

4. Հրատարակչական գործ, տպագրական գործ, տպագրական նյութերի վերարտադրում, ուսումնամեթոդական ձեռնարկների, մասնագիտական բուկլետների պատրաստում, հրատարակում և իրացում,
5. Տեղական նշանակության քարտեզագրագեոդեզիական նյութերի և տվյալների վերաբերյալ տեղեկատվության տրամադրում,
6. Թեմատիկ քարտեզների և հատակագծերի կազմում և հրատարակում,
7. Սահմանված կարգով գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների չափաբանական ապահովում,
8. ՀՀ տարածքում տեղական նշանակության, ինչպես նաև նրա սահմաններից դուրս /հարակից տարածքներում/ քարտեզագրական հիմքի ստեղծման նպատակով տիեզերանկարահանման տվյալների ընդունման և դրանց մշակման աշխատանքներ,
9. Քաղաքաշինական ոլորտի գործունեության նախագծային աշխատանքների իրականացում,
10. Ինժինեռատեխնիկական գծային կառուցվածքների /երկաթգիծ, ճանապարհ, էլեկտրականության և կապի վերգետնյա ու ստորգետնյա գծեր, խողովակաշարեր/ նախագծային փաստաթղթերի մշակման նպատակով գեոդեզիական պլանաբարձունքային հիմքի ստեղծում,
11. Հանրապետական, մարզային, համայնքային, միջհամայնքային, ներտնտեսային հողաշինարարական նախագծերի, հողերի օգտագործման և պահպանության, նոր հողերի իրացման, բարելավման, ռեկուլտիվացիայի նախագծերի, հողերի օգտագործման սխեմաների նախագծային ախատանքների իրականացում, գլխավոր հատակագծերի կազմում,
12. Անշարժ գույքի շուկայական գնահատում,
13. ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համակարգում չաշխատող անձանց ուսուցում, վերապատրաստում, մասնագիտական որակավորման բարձրացում:

Հավելված 3 «Գեոքարտ» ՊՈԱԿ –ի կառավարման և գործունեության նկատմամբ վերահսկողական գործառույթները

24. Լիազորված պետական մարմինը իրականացնում է կազմակերպության ընդհանուր կառավարումը:
25. Լիազորված մարմինը՝

- ա) հաստատում է կազմակերպությանը սեփականության կամ օգտագործման իրավունքով հանձնվող՝ պետությանը պատկանող գույքի կազմը,
- բ) նշանակում է կազմակերպության լուծարման հանձնաժողովը և հաստատում է լուծարման հաշվեկշիռը,
- գ) իրականացնում է կազմակերպության գործունեության նկատմամբ վերահսկողություն,
- դ) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում գործադիր մարմնի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրությունները և ցուցումները,
- ե) լսում է կազմակերպության գործունեության մասին հաշվետվությունները և համաձայնություն է տալի կազմակերպության գույքի օտարման և ձեռք բերման հետ կապված խոշոր գործարքների կնքման համար,
- զ) հաստատում է կազմակերպության տարեկան հաշվետվությունները և հաշվեկշիռը,
- է) նշանակում է գործադիր տնօրենին՝ կնքելով աշխատանքային պայմանագիր, սահմանում է նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցման, վարձատրության կարգը և պայմանները,
- ը) համաձայնություն է տալիս գործադիր տնօրենի կողմից հաստատված կազմակերպության ձեռնարկատիրական գործունեության ընթացքում ստացված շահույթի օգտագործման ուղղություններին,
- թ) հաստատում է կազմակերպության գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերը.
- ժ) հաստատում է կազմակերպության տարեկան ծախսերի նախահաշիվը,
- ժա) համաձայնություն է տալիս գործադիր տնօրենի կողմից հաստատված կազմակերպության կառուցվածքին ու կառուցվածքային ստորաբաժանումների իրավասություններին,
- ժբ) համաձայնություն տալիս գործադիր տնօրենի տեղակալ(ների) նշանակմանը,
- ժգ) քննարկում և հաստատում է գործադիր տնօրենի հաշվետվությունները,
- ժդ) Իրականացնել օրենքով, հիմնադրի որոշմամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ:
26. Կազմակերպության գործադիր մարմինը գործադիր տնօրենն է, որը ղեկավարում է կազմակերպության ընթացիկ գործունեությունը:

27. Գործադիր տնօրենի գործառույթներն իրականացնող անձի հետ կնքվում է պայմանագիր, որը հիմնադրի անունից ստորագրում է լիազորված պետական մարմնի ղեկավարը:

28. Կազմակերպության գործադիր տնօրենը՝

ա) առանց լիազորագրի գործում է կազմակերպության անունից, ներկայացնում է նրա շահերը Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում, տալիս է կազմակերպության անունից հանդես գալու լիազորագիր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր,

բ) աշխատանքի նշանակում և աշխատանքից ազատում է կազմակերպության աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում է խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր,

գ) լիազոր մարմնի համաձայնությամբ հաստատում է կազմակերպության կառուցվածքն ու կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները,

դ) տնօրինում է կազմակերպության գույքը՝ ներառյալ ֆինանսական միջոցները,

ե) կնքում է պայմանագրեր (այդ թվում՝ աշխատանքային),

զ) կատարում է աշխատանքի բաշխում աշխատողների միջև,

է) սահմանում է աշխատողների աշխատանքի վարձատրության չափերը,

ը) բացում է բանկային հաշիվներ,

թ) օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,

թա) հաստատում է կազմակերպության ձեռնարկատիրական գործունեության ընթացքում ստացված շահույթի օգտագործման ուղղությունները և ներկայացնում է լիազորված մարմնի համաձայնությանը,

թբ) լիազոր մարմնի համաձայնությամբ նշանակում է կազմակերպության գործադիր տնօրենի տեղակալին (տեղակալներին),

թգ) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությունից և սույն Կանոնադրությունից բխող այլ լիազորություններ:

V. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՏԱՄԱՐ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

29. Կազմակերպության գործունեության նկատմամբ վերահսկողություն են իրականացնում պետական լիազորված մարմինը, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ պետական մարմիններ:

30. Կազմակերպությունը պարտավոր է հիմնադրի կողմից սահմանված կարգով հրապարակել իր տարեկան ֆինանսական հաշվետվությունը:

Հավելված 4 Հաշվեքննվող օբյեկտի ղեկավարի կողմից ներկայացված բացատրությունները՝ կատարողական հաշվեքննության արձանագրության վերաբերյալ

Գեոքարտ ՊՈԱԿ-ի իրավակազմակերպական կարգավիճակի ազդեցությունը մրցույթի վրա

«Գեոքարտ ՊՈԱԿ-ի իրավակազմակերպական կարգավիճակի ազդեցությունը մրցույթի վրա» բաժնում նշվում է՝ «Գեոքարտ» ՊՈԱԿ-ին պետության կողմից անհատույց և անժամկետ տրվել է շենք, շինություն, շարժական գույք, սարքավորումներ, գործիքներ: Չնայած, որ ՀՀ պետական քարտեզագրագեոդեզիական ֆոնդի նյութերից և տվյալներից օգտվելու համար սահմանված կարգով գանձվում է վճար («Գեոդեզիայի և քարտեզագրության մասին» ՀՀ օրենք, 11 հոդված, մաս 3), սակայն «Գեոքարտ» ՊՈԱԿ-ը դրանցից օգտվում է անվճար»:

«Գեոդեզիա և քարտեզագրություն» ՊՈԱԿ-ի (այսուհետև՝ ՊՈԱԿ) շարժական գույքի և սարքավորումների, հիմնական մասը ձեռք են բերվել ՊՈԱԿ-ի ֆինանսական միջոցներով, իսկ օրենքում նշված ՀՀ պետական քարտեզագրագեոդեզիական ֆոնդ հանդիսացող արժեքների մեծ մասի հեղինակն էլ հենց «Գեոդեզիա և քարտեզագրություն» ՊՈԱԿ-ն է: 2018-2019 թթ. ձեռնարկատիրական գործունեության շրջանակներում, ՊՈԱԿ-ը որոշակի տեղեկատվություն ստանալու համար իրականացրել է վճարումներ: Օրինակ, անշարժ գույքի մասին անհրաժեշտ տեղեկություններ ՊՈԱԿ-ը ստանում է Կադաստրի կոմիտեից և վճարում է դրանց դիմաց:

ՊՈԱԿ-ը Կադաստրի մրցույթներին հաղթել է բոլոր հայտատուներից ամենացածր գնի ներկայացման միջոցով: Մասնավոր ընկերությունները ստիպված պետք է լինեին կրել այն բոլոր ծախսերը, որոնցից «Գեոքարտ» ՊՈԱԿ-ն ազատված է:

ՊՈԱԿ-ի ներկայացրած ամենացածր գինը պայմանավորված է եղել ոչ թե մասնավոր ընկերությունների նկատմամբ ծախսերի պակաս լինելով, այլ հիմնականում շահույթ չհետապնդելու հանգամանքով:

Ի պատասխան հաշվեքննիչ պալատի ստուգման արձանագրության՝ այն ենթադրության, որ Կադաստրը և «Գեոքարտ» ՊՈԱԿ-ը նախապես համաձայնեցրել են իրենց գործողությունները, որի արդյունքում պայմանագիրը շնորհվել է «Գեոքարտ» ՊՈԱԿ-ին, անհրաժեշտ ենք համարում նշել, որ նման համաձայնություն չի եղել և մենք մյուս մասնակիցների հետ մասնակցել ենք մրցույթին հավասար պայմաններով, ինչը բացառում է նախնական համաձայնեցման փաստը:

Մրցույթի ընթացակարգերում «Գեոքարտ» ՊՈԱԿ-ի իրավակազմակերպական կարգավիճակը այլ մասնավոր ընկերությունների նկատմամբ առավելություն է տալիս: Գործնականում «Գեոքարտ» ՊՈԱԿ-ն օգտվել է իր իրավակազմակերպական կարգավիճակից: Այն Կադաստրի մրցույթներին հաղթել է բոլոր հայտատուներից ամենացածր գնի ներկայացման միջոցով: Մասնավոր ընկերությունները ստիպված պետք է լինեին կրել այն բոլոր ծախսերը, որոնցից «Գեոքարտ» ՊՈԱԿ-ն ազատված է: Անգամ թվում է, որ Կադաստրը պայմանագրերը «Գեոքարտ» ՊՈԱԿ-ին շնորհելու մտադրություն ուներ:

«Գեոքարտ» ՊՈԱԿ-ը մրցույթներին մասնակցելիս գտնվել է նաև ոչ շահեկան պայմաններում, քանի որ՝

1. ՊՈԱԿ-ը ունի վարչա-կառավարչական անձնակազմ, որը ապահովում է աշխատանքների կատարումը և հիմնադրին օրենքով նախատեսված կարգերի համաձայն հաշվետու լինելու գործառույթը:

2. ՊՈԱԿ-ին տրամադրված վարչական շենքի պահպանման հիմնական ծախսերը (նաև կապիտալ) կատարվում են ՊՈԱԿ-ի կողմից՝ առանց փոխհատուցման:

3. ՊՈԱԿ-ը կրում է այն բոլոր ծախսերը, որոնք կրում են մրցույթին մասնակցած բոլոր կազմակերպությունները, քանի-որ հայտարարված մրցույթի պայմանները հրապարակվում և գործում են բոլորի համար հավասար:

4. Ըստ գնումների օրենքի, եթե մրցույթով առաջադրված աշխատանքների նախահաշվային արժեքը գերազանցում է 70 000 հազ. դրամ գումարը, պահանջվում է հայտի ապահովում բանկային երաշխիքի ձևով, իսկ ՊՈԱԿ-ի դեպքում՝ կանխիկ գումարի փոխանցման ձևով 5%-ի չափով, իսկ հաղթելու դեպքում՝ պայմանագրի ապահովում աշխատանքների արժեքի 10%-ի չափով, ինչը բավականին խնդրահարույց է ՊՈԱԿ-ի համար, քանի որ վերջինս շահույթ չհետապնդող կազմակերպություն է: Սկսած 2018 նոյեմբերի 30-ից ՊՈԱԿ-ի ֆինանսական միջոցները շրջանառվում են ՀՀ պետական գանձապետարանում: Այս նույն իրավիճակներում մասնավոր կազմակերպությունները ստանում են առևտրային բանկերի երաշխիքներ, առանց կանխիկ գումարների սառեցման, ինչը վերջիններիս համար առավելություն է:

ՀՀ ԱԳԿԿ-ԲՄԾՁԲ-18/02 ծածկագրով պայմանագիրը ստորագրելուց երեք աշխատանքային օր անց պայմանագրի վերջնաժամկետը երկարաձգվեց 2019 թվականի հունվարի 15-ը, իսկ աշխատանքները փաստացի ավարտվեցին մարտի 19-ին, այսինքն 63 օր ուշացումով: Պայմանագրային պահանջները չկատարելու համար Կադաստրի կողմից որևէ տույժ-տուգանք կամ այլ միջոցներ չեն կիրառվել:

Աշխատանքների իրականացման փուլում ակնհայտ դարձավ, որ ծավալները և տարվա վերջում մասնագետների ընդգրկումը բերելու էր նրան, որ կազմակերպությունը չէր հասցնելու աշխատանքներն իրականացնել պայմանագրով նախատեսված ժամկետներում, ուստի վերջինս դիմել է Կոմիտե ժամկետը երկարացնելու խնդրանքով, և փոխհամաձայնության գալով կնքվել է համաձայնագիր:

Անհրաժեշտ ենք համարում նշել նաև, որ աշխատանքների երկամսյա ուշացումը վերաբերվում է աշխատանքների ամբողջ ծավալի ընդամենը 15%-ին: Աշխատանքը քննարկվել է նաև տարբեր հարթակներում, դրվել է շրջանառության մեջ տարբեր պետական մարմինների կարծիքները ստուգելու նպատակով: Կոմիտեի ղեկավարությունը հասկանալով, որ ժամկետների երկարացումը բխում է աշխատանքային անհրաժեշտությունից՝ չի կիրառել ավելի խիստ միջոցներ:

Այս հարցի շուրջ որպես վերջին դիտարկում նշենք, որ ՀՀ ԱԳԿԿ-ԲՄԽՁԲ-18/02 պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման համար մրցույթը հայտարարվել էր դեռևս 2018 թվականի սեպտեմբերին և մասնակիցներից մեկի բողոքարկման պատճառով մրցույթի հաղթողին ճանաչելու և, հետևաբար, պայմանագիր կնքելու ժամկետները բավականին երկարաձգվեցին: Արդյունքում պայմանագիրը կնքվեց 2018 թվականի դեկտեմբերին, ինչը բավականին մոտ էր աշխատանքների նախօրոք որոշված վերջնաժամկետին՝ 2018 թվականի դեկտեմբերի 15-ին:

Կադաստրի կոմիտեի վերահսկողությունը «Գեոքարտ» ՊՈԱԿ-ի գործունեության նկատմամբ

Կանոնադրության 30-րդ կետի համաձայն «Գեոքարտ» ՊՈԱԿ-ը հիմնադրի կողմից սահմանված կարգով չի հրապարակել իր տարեկան ֆինանսական հաշվետվությունները:

«Գեոքարտ» ՊՈԱԿ-ը իր բոլոր ֆինանսական հաշվետվությունները սահմանված ժամկետներում ներկայացրել է լիազոր մարմնին: